

26 1892

ՊՐՈՒՏԱՑՄԱՆ ԲՈՒԺ ՏԵՂՄԱՆԵՐԻ ԱԿԱՑԵՐ.

ՏԵՐ. ՄԵԼԻՔ. ՏԱԼ. 285.7

9(Վ7.925)194 + 9(Վ7)173

~~177~~

~~լուս.~~

~~9(Վ7)173~~


ԱՎԱՐԱՐ 1951 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՔՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑԻՑ

1903-1907

A IV  
33812

ՑԵՐԿՆՈՒ Խացված նրանքակոթյուն



ՊԵՏԱԿԱՆ

1930

ՅԵՐԵՎԱՆ

<u>9(47.926)</u>	<u>31865</u>
<u>Մ-47</u>	<u>Մայիս-3ուշակի թ.</u>
<u>Դպրության բանալրություն</u>	
<u>Դպրության մասմաս</u>	

21

98 (E)

Տերութ 2000.

Վաղարշապատ

22.

## ՀՍՐԱՉԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

(Առաջին հրատարակության առքիվ)

Քառորդ գարի պատմություն ունի Հայաստանի բանվորական շարժումը:

Սակայն մինչեվ այժմս ել բաղաքական տարբեր տիպի համբակներ կամա-ակամա ծգտում են տարակուսանքի յենթարկել, կասկածի տակ առնել Հայաստանի բանվորության դասակարգային պարքարի շեշտն ու ընթացքը. Մինչդեռ այդ նշանակում և անզիտանալ պատմությունը, խարդախուլ խսկությունը յեվ չարամտորեն վարագութել Հայաստանի տնտեսական զարգացման յեվ հասարակական կյանքի շերտավորման շնորհիվ ծառացող հակադիր շահերի անխուսափելի բաղխումը:

Այսորվա հրամայողական պահանջն և վերհիշել Հայաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության նախապատրաստական ուղին, մերկացնել նրան նպաստող ու խոյնդու բաղաքական խավերի գերն ու նպատակները, արձանագրել նրա հաղթության կամ պարտության եզերը, —վորքան ննարավոր ե կոնկրետ, կենդանի որինակներով, —նամանավանդ վոր աշխատավորության անող սերնդի առաջապահ ներկայացուցիչները պարտավոր են իմանալու, ճանաչելու յերեկվան որը, վերագնահատելու անցյալի բաղաքական փորձը, վերապրելու ժամանակի բաղաքական պայքարը.

Քանի վորական շարժման հիմնական պատճառները սերտորեն շաղկապված են յերկրի արդյունագործական կյանքի զարգացման —աշխատանքի շահագործման պրացեսում յերեվան յեկող հակադիր շահերի անմիջական, տեսանելի բաղխման հետ. Գծելով այստեղ արտադրության զարգացման ընթացքը, միաժամանակ նիշել ենք բանվորական շրջանների՝ նացիոնալիստական ազդեցություններից սթափվելու մունքները, ինչպես յեվ վերջինիս հեղափոխական —դասակարգային վոգորումները: Վերջին դեպքում մենք պետք ե հանդիպելինք ինչպես զյուղացիական ըքավորության հողային շարժումներին, նույնպես յեվ

Հայաստանի մասսաներին հեղափոխությանը խորթացնող՝ կենտրոնախույս ուժերի գործունեցության։ Մենք հարկադրված ենքնոք զբաղվել նայել այս յերեվույթիների մասնավոր քննությամբ, վորքան յեզ դրանք դուրս լինելին մեր բուն ծրագրի շրջանակից։

Խուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության Անդրկովկասյան կազմակերպության յեվ հատկապես իր բայլշեվիկյան հատվածի կատարած դերը մեր բանվորական շարժման մեջ մնում ե դեռ յեվս շատ շատերի յեվ ամենից առաջ յերիտասարդ սերնդի համար terra incognita, յեվ այդ իսկ պատճառով մենք աշխատել ենք հնարավորության չափ կանգ առնել նրա գործունեցության քանի մի մանրամասնությունների վրա՝ լրացնելու ալդ խոչընթացը, մանավանդ վոր դեռ յեվս արձանագրված չե լիովին Անդրկովկասի յեվ մասնավորապես Հայաստանի բանվորական շարժման կաղապարման ժամանակաշրջանի հեղափոխական եզերը։ — Թերեւլու այդ դեռ ուշ չե։

Սակայն սրանով մենք յենք սպառել մեր նյութը յեվ հավակնություն ել չունենք յենթադրելու, վոր ընդգրկել ենք մեզ զբաղեցնող պատմական շրջանն իր, ամբողջությամբ։ Դեռ ցիր ու ցան՝ կան դոկումենտներ, վոր մեր կամքից անկախ չեն ոգտագործվել։ Սրանց կենտրոնացնելու անհետածգելի գործը միայն հնարավորություն կտա վերականգնել Հայաստանի բանվորական շարժման ամբողջական պատմությունը։

Հավելվածում զետեղված մի քանի խմբատիպ դոկումենտները զալիս են շատ բան ապացուելու—յեվ ամենից առաջ այն, վոր 1903—07 թ. թ. Հայաստանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների դժնդակ պայմաններում վարած աշխատանքներն աննկատ ու անհետեվանքնը չեն մնացել։

Յեվ յեթե, այնուամենայնիվ, մեզ հաջողվել ե զեթ ուրվագծել Հայաստանի բանվորական շարժման շտրիխները սահմանափակ մի ժամանակամիջոցում (903—07 թ. թ.) յեվ տալ յերիտասարդ զվարդիկային մեր որերում կատարված միծ դեպքերի զարգացման պատմական ընթացքը—մեր առաջադրած նպատակն իրազործված կհամարենք

Են. Մելիք-Շոլյան.

Մոսկվա,  
նոյեմբեր, 1923 թ.

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Չորս տարի առաջ հրատարակված այս գիրքը շատ հարժար առիթ ծառայեց զաղեմի մենշեվիկ Գ. Ղարաջյանի քաղաքական մի յելութիւն։ Նրա գրախոսական ֆելյետոնները («Խորհրդ» Հայաստան՝ № 262 — 3, 1924 թ.) վոչ այնքան նպատակ ունեցին արժեքավորելու մեր աշխատությունը, փորբան, յեվ առաջի ներթին, հանուն «պատմական իրողության» յուրատեսակ ըմբռնման մի անգամ յևս պաշտպանության տակ առնել Անդրկովկասի խայտառակ մենշեվիզմի անցյալը։ Հետեւողական մենշեվիկ Գ. Ղարաջյանի այս բուռն ցանկության մեջ տարրորինակ վոշինչ չկար. Միանգամայն բնական եր, փոք այս առթիվ նա հրապարակ հաներ յեվ մենշեվիկյան արսենալից անցյալ պայքարի ժանգոտած բոլոր արգումենտները։ Այլ կերպ ել չեր կարող լինել։

Այս հանգամանքն ե թելադրում մեզ, ոգտվելով առիթից, քննության առնել նրա պրինցիպյալ մի քանի դիտողությունները։

Գ. Ղարաջյանին ամենից առաջ դուք չի յեկել մեր հնատապության մեթոդը։ «Քաղաքական շարժման պատմազրի նպատակի մեջ իր մտնում իր պատմությանը տնտեսական—զիտական հնտագործությունների ընույթ տալ, գրում ե նա, —յեվ չբավականանալով միայն իտոգներով, ծանրաբեռնել իր պատմական աշխատությունը քազմաթիվ վիճակագրական տվյալներով յեվ այդուսակներով։ Այլ կերպ ասած՝ նա առաջադրում ե մեզ կիրառել պատմողական մեթոդը, դուքս ծգելով յերկրի արդյունազործության զարգացման, ազգաքնակլության առցիալական տարրեր շերտավորման վերաբերյալ թվական այն տվյալները, վորոնցով մենք հիմնավորել ենք մեր մըտքերը։ Մարքսիստական գրականության մեջ Ղարաջյանի վերոհիշյալ տեսակետը քաժանող հազիվ մեկ ուրիշը գտնվի։ Մանավանդ վոր մեր յերկրի յեվ ժողովրդի եկանոմիկայի «իտոգները» նշտելու համար գրեթե վաշինչ չի արված։ Անդրկովկասի քաղաքական շարժումների լուսաբանության նվիրված մարքսիստական վոչ մի աշխատություն անցամ հարեւվանցիորեն չի մոտեցել այդ «իտոգները» վերականգնելու

պլորլեմին. Յերկրի տնտեսա-քաղաքական կյանքի զարգացման ընթացքը չի կարելի լրագրական, հարեվանցի՝ սուբյեկտիվ խորհրդածությունների նյութ դարձնել, ինչպես ցանկանում ե մեր ուղևնդեմուր-

Հատկապես նա մերոգական սխալ ե համարում յեվ այն, վորմեր նյութը սահմանափակել ենք ներկա Խորհրդային Հայաստանի ռերֆորմատով: Միանգամայն անսպասելի երստազով քոնված<sup>4</sup> այստեղ նա ուզում ե խոցել մեզ մեր զործած մեղքերի համար, բայց զույգ վոտքով ընկնում ե ծուզակ... զրչի մի թեթեվ հարվածով նախարդախում ե ամենից առաջ մեր զրածու: Զոռով մեր զգին ծգելով «հայ բանվորական, հայ բանվորության քաղաքական շարժումների պատմազրի» անփառունակ բանկոնը, նա պահանջում է մեզնից «նախօալ Թոփելիսի, Բագվի յեվ Բարումի ուշանեւրի հայ բանվորության յեվ սոցիալիստական ինսելիգենցիայի՝ Քաղաքական գործունեյության մասին յեվ ապա անցնել ներկա Խորհրդային Հայաստանը կազմող տերրիտորիայի շարժումները» (ամեն տեղ մեզ բերած խոսքերի ընդգծումները մերն են. Մ.): Բայց վորովհետեւ մենք աննկատ ենք առել «ինտերնացիոնալիստ» ուղենցնախի այդ համահայկական ոդյոզ առաջարկը յեվ ուրվագծել սիայն սահմանափակ մի տերրիտորիայի վրա կատարված քաղաքական շարժումների ընթացքը 1905 թվի հեղափոխական պերիոդում՝ ուստի յեվ «այդ տնսակետից (!!? Մ.) զիւրը սպեցիֆիկի աօխատության սպավերություն ե զարծում»: Այս միաբը, բարեբախտաբար, փիթած թելերից ե հյուսված: Անուշադիր ընթերցողն անզամ, յեթե զինված լինի չարամիտ դիտավորությամբ—անշուշտ կնկատի, վոր մեր նպատակն ե յեղել ուրվագծել մի ռերիսորիայի բանվորական շարժման օրինանոր անկախ նրա ազգային պատկանելության: Սպեցիֆիկյան ի՞նչ կա այստեղ:

Ուրվագծել «եեղափոխական շարժումը Պարբեցանում» (ընկ. Ռազմի Հյուսեյնովի համանուն աշխատությունը), «եեղափոխական շարժումը Գուրիայում» (ընկ. Կալանտածելի յեվ Միսեհելի աշխատությունը), «Թոփելիսի բանվորական շարժումը» («Իսկրա»-ի հրատարակությունը) յեվ այլն, յեվ այլն, նույնպես սպեցիֆիկյան մեթոդ ե յեվ կամ սրանց հեղինակները՝ հայ սպեցիֆիկյան մեթոդ են:

Սակայն ի՞նչ ե ուզում ասել իր «տպավորությամբ» Գ. Ղարաջյանը. Մի միտք անշուշտ տանզում, վրդովում ե նրա հանգիստը.— յինի՞ թե Անդրկովկասի քաղաքական շարժումների ուսումնաափրության ներկա ռերֆորմատ սահմանափակումը մոռացության տարնկերներց» վոմանց կատարած դերը... «մի՞թե Բագվի կամ Թիֆլիսի պրոլետարական շարժումները պետք ե վերագրել Ադրբեյջանի

յեվ Վրաստանի բաղաքական պատմության..., զայրացած բողոքում և նաև Այսուղի ամբողջովին մերկանում և ռեցենզենտի յեվ անձնական, յեվ ազգային արժանապատվության հասցրած միրավորանը. Դուրս և զալիս, վոր մեր աշխատությունը «սպեցիֆիկյան» տպագործություն և գործել նախ յեվ առաջ նրա համար, վոր մենք անզիտացել ենք Հայաստանի սահմաններից դուրս աշխատող ենչ գործիքերի կատարած դերը, յեվ յերկրորդ՝ վոր «Բազվի յեվ Թիֆլիսի պրոլետարական շարժումները» վերագրել ենք միայն Ադրբեջանի յեվ Վրաստանի բաղաքական պատմության... Պարզ և նացիոնալիստ Ղարաջյանի նախանձախնդրության իմաստը. խղճուկ իր միտքը նա պարունել և թափանցիկ շղարշով:

Առաջնորդվելով այդ մտածելակերպով, հարկավ, նա դժգոհեր, վոր մենք յենք գերազանչ նայեվ «հայկական կապիտալի» կատարած դերը. Ի՞նչպես յեվ վո՞ր իրավունքով «գերազանցապես Անդրբեկովկասի (իմա՞ եալ. Մ.) բուրժուազիայի (հայ, Թուրք յեվ այլն) յեվ յելքուական կազիտալի շահագործման արդյունք Բազվի նավթը համարել ուսւական կապիտալիստական արդյունագործության յեվ առեվտրի առարկա»—առարկում և նա մեզ. Սակայն՝ վո՞րտեղից և բաղել նա այդ յեզրակացությունը:—Տնտեսագիտ Ռ. Դանիլովիչը իր աշխատության մեջ («Բրակոսկայ քանինա») խոսելով Յերեվանի շուկայի ապրանքատարողության մասին, մեզ ե բերում հյուսիսից Աղստաֆա գծով ներմուծած ապրանքների յերկար աղյուսակը: Վերցնելով ներմուծման միայն տարեկան գումարները յեվ խույս տալով հիշատակած ապրանքների ընդարձակ անվանացանկից, մենք անմիշապես բվարկել ենք այնուղից, վոր այդ «ներմուծածի մեծ մասը գործարանային փաքրիկատ ե, ապա կերասին, յերկաթ, շաբար յեվ այլն (եզ 8—9):» Հիշատակված ե աղյուրը, եզը: Հարկավոր եր միայն այն տեսնելու յեվ ստուգելու ընդունակությունից զուրկ զինել յեվ բարեխիղճ վերաբերվել դեպի գրական խոսքը: Մինչդեռ ուղիղ դրա հակառակն ե վարվել Դ. Ղարաջյանը յեվ այդ մի համարիկ «Կերասին» բառը վերագրելով մեզ՝ արձակել ե իր վնիոր՝ «Մելիք-Ցոլչյանի զրբեց սպեցիֆիկմ ե բուրում»: Մինչդեռ մեզ այդտեղ հետաքրքրել ե ներմուծման գարգացման պրոցեսը յեվ վոչ թե այս կամ այն ապրանքի ծագումը կամ վորակը: Սակայն յեվ սկզբունքային տեսակետից արդարացի չե Ղարաջյանը, յերբ Բազվի նավթը մերժում և դիտել վորպես «ուսւական կապիտալիստական արդյունագործության յեվ առեվտրի առարկա»: Բայց այդ մասին բիչ նետու:

Մինչեւ յս կարգի յեվ նույնան արտառոց մի գիտողություն

և յեզ այն, թե իրբեկ «հեղինակի այժմց վրիպել և Հայաստանի գու-  
վառներում այլազգի բանվորության կատարած գերք»: Արձանագրե-  
լով, վոր «այդ բանվորների հոսանքը դեպի հայարձնակ վայրերը մե-  
ծապես զարկ տվեց մեր յերկրի բաղաքական շարժման զարգացման»,  
Դարաջյանը կցում ե՝ «այդ բանի ապացույցները ուղիս և ընկ. Մե-  
մբ. Յուլյանի գիրքը»: Մի հարցնող լինի, յեթե «այդ բանի» (այլազ-  
գի բանվորների կատարած դերի. Մ.) տասնյակ ապացույցները տա-  
լիս ե մեր գիրքը, ապա ի՞նչպես ե, վոր նա «վրիպել և հեղինակի աշ-  
քից»: Բարեխիղն ընթերցողը հեշտությամբ կնկատի, թե, իրոք, ո՞ւմ  
աչքից ի՞նչ ե վրիպել...

Հո չի կարելի բննական խոսքը զավեշտի վերածել:

Գ. Դարաջյանը դգօնի ե, վոր մենք հարուցել ենք այնպիսի  
հարցեր, «վորոնք միայն կարող են վիճելի լինել»: Սրանց շարքին նա  
դասել ե ինքնակալության գաղութային բաղաքականության յեվ ոռու-  
սական առեվտրական կապիտալի գործունեյության վերաբերյալ  
խնդիրները:

Տնտեսական ի՞նչ բաղաքականություն եր վարում ինքնակալու-  
թյունը Անդրկովկասում. այս մասին մենք գրել ենք՝ «...ոռուսական  
ներմուծվող ֆաբրիկատը զրավում ե, տեղական շուկան: Վորպես հե-  
ռուավոր յեվ հետամնաց ծայրագավառ, Հայաստանը յեփս ասպարեզ և  
դառնում կենտրոնական իմպերիայի գաղութային սպանիչ բաղաքա-  
կանության: Կուտակվող առեվտրական կապիտալը արտահանում և  
այստեղից հում նյութ, միաժամանակ մաքառում կենտրոնական ար-  
դյունագործության արտադրությունը» (եջ 1—2). Գ. Դարաջյանը  
սխալ յեվ անհնարին ե համարում այդ. «Խնդիրն այն ե, զրում ե նա,  
թե ցարական հին ոեմիմի որով ոռուսական բուրժուազիան, ոռուսա-  
կան առեվտրական կապիտալը հնարավորություններ ունե՞ր ծայրա-  
գավառների վերաբերմամբ իր տնտեսական գաղութային բաղաքա-  
կանությունն անարդել, լայն չափերով կիրառել»: Իսկ ինչո՞ւ չեր կա-  
րող կիրառել յեվ ո՞վ եր խանգարում նրան,— «Հայկական յեվ ոռու  
կապիտալները նսեմացնում, եերին պլանն եին մզում ոռուսական  
կապիտալը»—պատասխանում ե նա: Այսպիսով ստացվում ե, վոր—  
ա) ոռուսական կապիտալիզմը ծայրագավառներում (մասնավորապես  
Անդրկովկասում) գաղութային բաղաքականություն կիրառել անկա-  
րող եր՝ շնորհիվ «տեղական» կապիտալի դիմադրության, յեվ ը) Անդրկովկասը յենթակա յեր «գերազանցապես տեղական (իմա՝ հայ-  
կական. Մ.) յեվ ոռու, բան ոռուսական կապիտալի ազգեցուրյան»:

ա) Թե վո՞րչափով ե դիմադրել տեղական կապիտալը ինքնա-

կալության բազաբականության յեվ ի՞նչ արտահայտություններ ե ստացել՝ այդ մասին ուցենազնար լուսմ և Մեզ, գոնե, հայտնի յե, վոր ռուսական բուրժուազիան կիրառում եր ամբողջովին գաղութային խաղաքանակություն նայեվ մեր լեւում: «Բուն Ռուսաստանի յեվ Անդրկովկասի փոխհարաբերությունները հաստատել գաղութային շահագործության հիմքերի վրա—ահա ամենահզոր ինքնակալության տնտեսական բազաբականության այբուբենը, ինքնակալությունը Անդրկովկասի շուկան դարձնում է ռուս առեվտրա-արդյունագործական կապիտալի բացառիկ սեփականություն: Անդրկովկասը, վորպես գաղութ, պարտավոր եր սպառել Ռուսաստան—մետրապոլիայի մարդկատները<sup>1</sup>», Գ. Դարաջյանին համոզելու համար առ բավական չե: Այդ միջեւմույն «վիճելի» խնդրի մասին շատ պարզ յեվ մեկին պատասխան և տվիլ<sup>30</sup> տարի առաջ Վ. Ի. Լենինը: Ահա յեվ այդ<sup>2</sup>:

«Այն մասին, վոր հետո եփորմյան ժամանակաշրջանում լիվրոպական Ռուսաստանի հարավային յեզ արևվելյան թնակեցրած ծայրագավառները տնտեսական առումով ներկայացնում եին իրենցից յիվրոպական Ռուսաստանի գաղութներ — արդեն ասված ե իր տեղում։ Դաղութի այդ բմբոնումը ել ավելի հարմար է ուրիշ ծայրագավառների՝ որինակ, նովկասի նկատմամբ։ Մրա տնտեսական «գրավումը» ավելի ուշ կատարվեց, քան բաղաբականը, սակայն տնտեսական այդ գրավումը մինչ այժմ ել չի վերջացած։ Հետո նեփորմյան ժամանակաշրջանում մի կողմից կատարվում եր կովկասի ուժեղ գաղութայնացումը (կալոնիզացիա), յերբ կալոնիստները մեծ չափերով վարում են հողեր (հատկապես հումսային կովկասում), արտադրում վաճառքի համար ցորեն, թութուն յեզ այլն, զրավելով միաժամանակ Ռուսաստանից զյուղի վարձեկան բանվորների բազմություն։ Մյուս կողմից, շնորհիվ ներմուծվող մոսկովյան Փաքրիկատների կոնկրետնեցիայի, ընկնում եր տեղական «տնայնագործական» գարավոր արհեստները։ Թվելով յերկաթի, պղնձի, վոսկու յեզ արծաթի, կավի, երազի յեզ սողայի, կաշվի յեզ այլ արտադրությունների անկումը՝ շնորհիվ այդ մրցության, նա շարունակում ե. «Ռուսական կապիտալիզմը այսպիսով ծգում եր (ՎՏԳԻՎԵԼ) նովկասը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, յենթարկելով նիվելիքովկայի նրա տեղային առանձնահատկությունները՝ հին նահապետական կղզիացման հետքերը, — սեղծում եր իրեն ուռւա (ընդգծումը բնագրինն ե. Մ.) իր Փաքրիկաների համար։ Այն յերկիրը, վոր հետո եփորմյան շրջանի սկզբում թույլ եր բնակեցրոված յեզ կամ բնակեցրոված եր լիունեցիներով, վորոնը մի կողմ եյին կանգնած համաշխարհային տնտեսու-

<sup>18</sup> У. Ісаюмін, Післяважаючи єн розумівши що відома відповідь на це питання вже мається в публічному засобі масової інформації, він не відмінив її, а лише зробив її залежною від підтвердження відповіді на попереднє питання.

<sup>2</sup> В. И. Ленин. Сочинения, т. III, II-ое изд. Москва, 1926 г. № 463—4.

թյունից՝ անզամ պատմությունից, — դառնում ե նավթարդյունաբերողների, զինեվաճառների, ցորենի յեվ թութունի ֆաքրիկանտների յերկիր»...

Ի՞նչ կա այստեղ վիճելի.

ը) Գ. Ղարաջանը Անդրկովկասի յեվ մասնավորապես Բագվի կապիտալիստական զարգացումը վերագրելով «զերազանցապես հայկական կապիտալին», իր յեզրակացություններում ակամայից հանգում ե Բ. Իշխանյանի հայտնի կոնցեպցիային. Դ. Ճանլուսի աշխատությունից մեզ բերած կերասին բառը ծայր աստիճան վրդովել է նրա նիրեր. — Բագվի նավթը նկատել վորպես ոռուսական կապիտալիստական արդյունագործության յեվ առեվտրի առարկա՝ դա սրբազնություն ե՝ իսկական սպեցիֆիկզմ, մինչդեռ այն համարել վերազանցապես Անդրկովկասի (իմա՝ հայ. Մ.) բուրժուազիայի կապիտալի շահագործման արդյունք՝ կատարյալ ինտերնացիոնալիզմ ե ըստ Գ. Ղարաջյանի «կոմաքետենտ» դատողության: Յեվ այս դատարկախոսությունը հատկապես նրա համար, վորպեսզի դրվագի հայ բուրժուազիայի կատարած գործը:

Խոսելով Անդրկովկասի արդյունագործության զարգացման մասին, մենք ընդգծել ենք թե յելքուական յեվ թե ոռուսական առեվտրաարդյունագործական կապիտալի դերը. «Անդրկովկասը, զբել ենք մենք, մեկն եր այն շրջաններից, ուր 70—80-ական թվականներից սկսած կենտրոնանում, հաստատվում եր յելքուական, ապա յեվ մասսամբ ոռուսական խոշոր կապիտալը» (եջ 11): Յեվ վերջապես մենք հարկ չենք ունեցել ոռուսական առեվտրական կապիտալից զատել այսպես կոչված «հայկական կապիտալը» յեվ կամ զրադիվել նրա ազգային գեներալիստ Սխալվում և ուեցենազենտը, յերբ հակադրում ե մասնավորը ամբողջին, հայկականը՝ ոռուսական կապիտալին: Կրկնակի սխալ յեվ անբարեխիղն պահանջ ե առաջարել մեզ հառկապես զրադիվել ծագումով հայ կապիտալի մեզ գրադեցնող ուշաներից զուրաց ունեցած գործունելությամբ. Ղարաջյանը այստեղ յեփս ուզում ե հրճվել կրկին ազգային արժանապատվության թմրուկով.

— Ինչո՞ւ չեր զբաղվել «զերազանցապես» հայկական կապիտալի, հայ բուրժուազիայի կատարած գործունեյութամբ, — ինչո՞ւ չեր արձանագրել Բագվի, Բաթումի (թերյեվս Գրոզնու) հայքանվորության յեվ հայ սոցիալիստական ինտելիգենցիայի հարուստ գործունելությունը — այս հարցերն են մթաքնել մեր ուեցենազենտի վողք տեսողության դաշտը: Այստեղ նա այնքան մոտիկ յեվ հարազատ ե սովորական բուրժուական նացիոնալիզմի թագնված ծգուումներին, վորքան յեվ հայկական մեշյանական սպեցիֆիկզմին:

Անցնելով սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պատմության, Գ. Ղարաջյանը, վորպես կոմիկասյան մենշեվիզմի շատ վորձ-

ված զինվոր, դիմում և հարձակման մի հին պրիումի. «Պատմական իրողությունն այն ե, զրում ե նա, վոր նկարագրված (լսում եք. Մ.) ժամանակաշրջանում Անգրկովկասի ս..դ. կազմակերպությունների ահազին մեծամասնությունը... սոցիալ-գեմոնիրատական-մեթոդիկական ելին»: «Տիրողն Անդրկովկասում սոցիալ-դեմոնկրատ մենշեվիկական ֆրակցիան եր», կրկնում ե մի այլ տեղ: Սա նշանակում է, վոր յիթե մեր «նկարագրած ժամանակաշրջանում»՝ 1903—07 թ., տիրողն իրոք մենշեվիզմն եր. ապա ուրեմն հանցանք ե, վոր մենք յեզ աչքաթող ենք արել այդ, յեզ իրուր զբաղվել «համոկապես սրա կամ նրա գերբ» զերազնահատելով: — Սակայն այստեղ յսկ մենք զործ ունենք սովորական մենշեվիկյան նենգամտության հետ:

Նախ վո՞րն ե պատմական իրողությունը առանց չակերտների:

Մինչեւ 1905 թ. սկզբները Անդրկովկասում տիրողն յեղել ե բայլօւսվիզմը: Անդրկովկասյան ս..դ. բոլոր կազմակերպությունների առաջին յերեր համագումարները անցել են «Կովկասյան Միության» ղեկավարությամբ: Սկսած 1905 թ. զարնանից մենշեվիզմը հետզնետն մեծամասնություն ե ատանում Թիֆլիսի, Բաթումի յեզ ուրիշ մի քանի կոմիտեներում, այնպես փոր, Մայիսի 1-ին Մցխեթում գումարած սրանց խորհրդակցությունը պահանջում է «Կովկասյան Միության» լիկիդացիան յեզ կազմակերպում «Կովկասյան շրջանային Բյուրո» (մենշեվիկական), վորը յեզ հետապայում իր ծեռքն ե առնում մենշեվիկյան կազմակերպությունների ու հեղափոխական շարժման ղեկավարությունը: Զնայած անգամ դրան, «Կովկասյան Միությունը» յեզ բայլօւսվիկյան կազմակերպություններն ու ֆրակցիաները շարունակում են գուգընթաց իրենց աշխատանքն ու պայքարը: Իրողությունն այս Յեթե մենշեվիզմի Գ. Ղարաջյանի հիշողությունն այդքան թույլ չի ներ յեզ նա սահմանափակեր այդ ժամանակաշրջանը 1905 թվից՝ մենք կհաշտվելինք վորոշ զերապահությամբ: Սակայն պնդեյ, թե առհասարակ մեր նկարագրած պերիոդում տիրողը մենշեվիզմն եր — պատմական կոպիտ սխալ ե<sup>1</sup>:

Միջանկյալ նկատենք, վոր մեր նպատակից դուրս ե յեղել հայկական գավառների ս..դ. կազմակերպությունների այս կամ այն ֆրակցիայի պատկանելիությունը շեշտելը: բայց մեր մի հարեւանցի դիտությունը (ծանօթության մեջ) Յերեվանի կազմակերպության նկատ-

<sup>1</sup> Նման մի անթույլատրելի սխալ ե արել նաև ընկ. Ա. Կարինյանը, սաս վո՞րի «1904—1905 թ. հեղափոխական օւրժման վերելքի առիներին կավկասյան սոցիալ գեմականական լինելով մեծության կիրառում (?) եր հոգախ մեծամասնական գործելակերպը և գործուած եր փաստորեն հեղափոխական մեթոդների համաձայն» (ընդգծուածները մերն ե. Մ.): Նփոթված այս տեսակերպը միհնույն մենշեվիստական» կազմակերպության վերադրել ե «Հետեւողական, ամենաեզափոխական, մարտական, միակ ինտերնացիոնալ» և նման այլ ածականներ: Ցես Ա. Կարինյան—Կովկասյան պրոլետարիատի պատմությունից, պրակ 2. Մոսկվա, 1919 թ. էջ 9—11:

մամբ առիթ և տվել Գ. Ղարաջյանին հեղաքյուրել մեր անցյալը՝ ամրողութիւն կիրառել իր մենշեվիկյան «պատմական իրողությունը»։—

ա) «Եւրեվանի կազմակերպությունը սոցիալ-դեմոկրատական եր՝ «հաշոտարար» տրամադրություններով, յնին կուզեր՝ ավելի օւր մենչեվիկական եր, բան բայց եվգիկական»։

բ) «Սւեբուտնգրապուխ կազմակերպությունը համարել բայլօնվի-կական, վորովճետեվ նա «բոյկոտիստական» թուուցիկ և հրատարակել, կարելի չե»։

գ) Միայն Դարսի գրուպան ե, վոր բայլօնվիկական կովկասյան Միության անվան օտե և հանդես գալիս»։

դ) Միալ և «համարել մյուս տեղերի ու գ կազմակերպությունները անպայման բայլօնվիկական»։

Կանգ առնենք Գ. Ղարաջյանի այս գիտողությունների վրա. տեսնենք չի՞ հեղաթյուրում նա արդյոք պատմական իսկությունը։

ա) Հանրածանոթ փաստ ե, վոր մեր կուսակցության III, IV. յեզ V համագումարների շրջանում չեր կարելի գտնել վոչ միայն ամբողջ կազմակերպություն, այլ յեզ անհատ սոցիալ-դեմոկրատ, վոր յիմանար յերկու ֆրակցիաների տարածայնության իմաստու։ Նախընտրական կամպանիայի ընթացքում բոլոր կազմակերպությունների ուշադրությունը բերեվուած եր այդ պայքարի շուրջը. Յեվ ահա այդ պայմաններում 1906թ.<sup>1</sup> IV համագումարին Յերեվանի կազմակերպությունը 300 ծայնով իր քվեն տալիս և շատ հայտնի բայլօնվիկ Ս. Շահումյաննե, թեյեվ նա ավելի մոտից զիտեր յեզ ճանայում եր մենշեվիկ Գ. Ղարաջյանին։ Այս ընտրությունը աննկատ յեզ անպատիժ չանցավ. հաջորդ համագումարի «ընտրական կամպանիայի ժամանակ կովկասյան շրջանացին կենտրոնը (մենշեվիկական) տեղեկանալով, վոր Յերեվանում մտադիր են համագումարին բայլօնվիկ ընտրել, —մինչ այդ, վոր նա բոլորովին չեր հետաքրքրվում այդ կազմակերպության բախտով յեզ չեր պահպանում վոչ մի կապ նրա հետ, —ուղարկում ե անմիջապես հասուկ ազենտի ընտրությունները խանգարելու համար», պատմում ե ընկ. Ս. Շահումյանը<sup>1</sup>. Սակայն ժողովանիայի այս «հատուկ ագենտի» (թերեւս իրեն՝ Ղարաջյանի) գաղտնիու ափաշակարա ձևոք առած բոլոր միջոցները ի դերեվ են անցնում, — Յերեվանի կազմակերպությունը V համագումար և ընտրում վոչ թե այդտեղ հյուրասիրվող մենշեվիկ Գ. Ղարաջյանին, այլ բոլորովին ել վոչ մենշեվիկ Գ. Սակալովսկուն։

Ի՞նչին վերագրել այս փաստերը. կույր պատմականության, թե՝ հաստատ ու զիտակից համոզմունքի. Թող ներվի, ուրեմն, մեզ կրկնել. վոր Եւրեվանի կազմակերպությունը մինչեւ 1907 թ. ավելի բայլօնվիկական եր, բան մենշեվիկական։

<sup>1</sup> Протоколы Лондонского съезда. № 175—177.

Շնորհիվ բայլշեփիկյան այդ տրամադրության, Յերեվանի կազմակերպությունը մենշեփիկական կենտրոնի կողմից հետին պլանի վրա յերնետված դեռես 1906 թ. Ստոկհոլմի համագումարի ամբիոնից կովկասյան մենշեփիկները կոկորդ ելին պատում ապացուցելու, վոր «Ենթավաճում գոյություն չունի սոցիալ-գեմոկրատական կազմակերպություն, այլ կա միայն մենշակյանների ազգայնական կազմակերպություն»։ Այս հայտարարությունը հատկապես ուղղված էր Յերեվանի դեղագոտ Ս. Շահնումյանի անձնավորության դեմ Համագումարը շավատաց մենշեփիկների այդ բամբասանքին։ Մակայն այսոր, 20 տարի անցնելուց հետո, մենշեփիկ Գ. Դարաջյանը կրկներով միեւվեսւն միօքը՝ ուզում և «լույս տիրել» անցած գնացած որերի վրա... Յերեվանի կազմակերպության մեծ մասը, — զրում և նա, — բաղարակսնապես դեռեվս անզրագիտ յեվ անզիտակից ելին, վոյ, սոցիալ-գեմոկրատ, այլ ավելի շատ համակրողներ։ Անա այս և «կոմակետնում» յեվ ամենից ծայրանեղ մենշեփիկ-ուղղենազենտի «պատմական իրողությունը», վորի հանդեպ խեղճացած ծունը են դրել մեր մյուս «քննադատները»... Մենշեփիկմի տրադիցիան չափազանց ուժեղ և, պատմությունը վոյինչ չի տվել Գ. Դարաջյանին։

բ) Ակերսանդրապոլի կազմակերպությունը մենք «անպայման» բայլշեփիկական չենք համարել, թեյել այսեղ յեվս 1905 թվին գոյություն ունեն «Կովկասյան Միության տեղական գրուպան» (տես հավելվածում № 2 դոկումենտը)։ Ինչու յեվ ի՞նչ նպատակով և ուցենազենար մեզ վերագրում այդ միտրը, մնում և զաղտնիք։ Մենք հատկապես արձանագրել ենք այդ ս.-դ. կազմակերպության տարած հսկայական հեղափոխական աշխատանքը զորքի, յերկաթուղու բանվորության յեվ բաղարի արհեստավորության մեջ։ Այսոր հետին թվով համարել այն յեվս «վոյ սոցիալ-գեմոկրատների, այլ ավելի շուտ համակրողների» կազմակերպություն, նշանակում և անզիտանալ, թերագնահատել այդ աշխատանքը յեվ զբաղվել սովորական մենշեփիկյան բամբասանքով։

գ) Ղարսի ս.-դ. կազմակերպությունը՝ հակառակ ակ Գ. Դարաջյանի ցանկության, յեղել և «ավելի շուտ» մենշեփիկական «Կովկասյան Միություն» անունով հոկտեմբերի 26-ին հրատարակած թուղթիկը կազմված և այդուղեղ աբսորված Բագվի 35 բայլշեփիկների ծես քով (տես եջ 84 յեվ 85), վորոնց աջակցությամբ կազմակերպված Ղարսի ս.-դ. գրուպան 1906 թվից դառնում և սովորական սոցիալ-գեմոկրատական կազմակերպություն։

դ) «Մյուս տեղերի» կազմակերպություններից Ղարաջյանը լիքատում նախկին Թուրքակի ս.-դ. բայլշեփիկյան կազմակերպությունը, վորի գործունեյության վրա մենք կանգ ենք առել իր տեղում։ Նա

<sup>1</sup> Протоколы Лондонского съезда—Եջ 175—177.

Դիտավորյալ ծեվով մոռացության և տվել այդ, վորաբեսզի չնիշի այն խայտառակ պայքարը, վոր յերկար ժամանակ վարում եր Թիֆլիսի մենշևկիկյան կոմիտեն հենց իրեն Գ. Ղարաջյանի, Ա. Յերզնկյանի յեվ այլող անմիջական մասնակցությամբ՝ լոռու կազմակերպությունը «փրկերու» բայլշեվիկ Ս. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Դեղուշկայի յեվ Կախոյանի «վասասակար» ազգեցություննեց. Զլինի թե ռենցենզենտի մոռացած այս Փոքրիկ իրողությունների վերականգնումն և «սպեցիֆիկյան մեթոդ».

Սակայն հետեւվենք ռենցենզենտի նպատակներին:

Գ. Ղարաջյանը մեղադրում և մեզ ինչ-վոր «արժանավոր ընկերների» կատարած գերի նսեմացման մեջ. Նրա յերույթի բաղականան քմասը հենց կայանում և նրանում, վորաբեսզի վերականգնի, դըրվատի «ընկերների» (իմա՝ հայ մենշևիկների. Մ.) յեվ խայտառակ մենշևիկումի կարծեցյալ «պատմական իրողությունը», «Գրի հեղինակը, — զանգատվում ենա, — համացնում ե ցնիկերներից! (? Մ.) առան կամ երան այնպիսի գեր, վոր երանք կամ չեն խաղացել, կամ նրանց կատարած դերը յենել և շատ համեստ. Մինչդեռ ընկերների (ի՞նչ, վոր Մ.) մեջ եան այնպիսիները, վորոնք արժանի եյթ ավելի ուշագրաւրյան յեվ վորոնք կամ անցողակի յեն հիօվում կամ ամենեվիճ չեն հիօվում։ Մեր հասցեյին ուղղած մարգկային առաջին տրտունջը չե սա... Ռենցենզենտը մոռացել ե, վոր մենք բաղաքական գործիչների կենսագրականը չե, վոր զբել ենք, ինչպես յեվ չենք զբաղվել շրջագայող «հատուկ ագենտների» հատուկ գործունեյությամբ։ Ղարաջյան—պատմագիրը պարօապուր ե հասկանալու մեջ. Սակայն՝ ժամ «ընկը հիշել», կամ «անցողակի» նկատել. վոր հեղափոխականի «կատարած դերն ենք թերագնահատել կամ անզիտացել — այս բոլորի կողքից Ղարաջյան—հեղափոխականը խռոված դեմքով անցնում ե լուռ ու մունջ... Sapientis Sat!

Զլինի թե այդ «արժանավոր ընկերների» մենշևիկների «կատարած գերի անցողակի դիտելը», կամ, ընդհակառակը, «շատ համեստ» շարքութիւն գործիչների մասսայական աշխատանքը նկատելն ու դրվատելը նույնպես սպեցիֆիկյան թերումն ե.

Գ. Ղարաջյանը իր «պատմական իրողության» հանդեպ մեր մեղանանքը վերջնականապես հաստատելու համար բերում ե յեվս յերկու որինակ. Վորապիսի հանցանք, մենք զետեղել ենք Ցերեվանի Կոմիտեն յի յերկու անդամի՝ ընկ. Մ. Միրաքյան—Շանթի յեվ Գ. Սակալուվակու պատկերները, վորոնցից «առաջինք—զրում ե նա, — մի անքաղաքական առնասմբ համար 1907 թվից առձակված եր կուսակցությունից»։ Արդյոք նիշտ ե այս բաց բերան զրպարտությունը. Ո՞վ եր Միրաքյան-Շանթը. — մի կրակոտ հեղափոխական-բայլշեվիկ, վոր 1906—1907 թվ. համապատասխան կազմակերպության գիտությամբ մասնակցել ե

մի քանի երսպրոպրիացիաների յեվ տերրորիատական ակտերի։ Ընկ.  
Ռ. Քաթանյանի յեվ Բ. Բորյանի վկայությամբ, նա խիզախ յեվ մա-  
րուր հեղափոխական դեմք եր մինչեվ իր մահը. ի դեպք՝ նա դատվեց  
Հավլաբարի հոչակավոր գաղտնի տպարանի գործով Կամոյի հետ  
միասին։ Այս «շանտաժիստ» բայլշեվիկի պատկերը խիստ վրդովել ե  
մեր բարենոցի ուեցենքնտին դեռեկտ 1906—1907 թվականներին. Ու-  
ղիղ 20 տարի առաջ մենչեվիկյան «Հոսանք»-ի հօգերում (№ 38, 1907 թ.)  
նա միյեվնույն կարծիքն եր հողովում «Երսպրոպրիացիաների մասին»։  
Այսորվա նրա բողոքը եւր չե. կրկին եին վեճ, հին կշիռ։ Հինավորց  
մենշևիկ Դարացյանի մեզ վերագրած «կերպարինի» նաղին միանում  
և յեվ «շանտաժիստ» բայլշեվիկի գորքը—մի՞թե սա յել սպացիիկիցմ չե.

Գրեթե նմանորինակ արգումենտ նայեվ Գ. Սակալովսկու հանդեպ.  
Այլեվս հարկ չկա մենշևիկյան հին բամբասանները քննության առ-  
նել. ընթերցողի համար այս բողոքից հետո պարզ պիտի լինի, թե ո՞ւմ  
հետ գործ ունենք յեվ ո՞գ և ձգտում պատմությունը կերպարանափո-  
խել «վորպես զանձն յուր»։

Սակայն այս ամենը չի խանգարում Գ. Դարացյանին շռայլել մեր  
հասցեյին, տասնյակ ներբողներ համարել «իր տեսակի մեջ միանգա-  
մայն վողջունելի» յեվ խրախուսանքի արժանի աշխատություն» յեվ  
այլն յեվ այլն։ Համենայն դեպս այդ տարրական գրանանչությունից  
գործի մնացին իրեն հետեւվորդ՝ մեր մյուս «բննադատները»։

Իր ժամանակին «Մարտակողի» լրագրողներից ընկ. Ս. Խանո-  
յանը մենշևիկ Դարացյանի վերոհիշյալ դիտողությունները համարելով  
100% նշմարտություններ, իր կողմից բացականչում ե. — «Մեզ պետք ե  
անաշառ պատմություն յեվ վոչ թե սրա-նրա շոյանքը կորզող պատ-  
մություն» («Մարտակող» № 267, 1924 թ.). Յերբ այս միյեվնույն պա-  
հանջով Դարացյանը հրապարակ ե խոթում պատմությունից անվերա-  
դարձ վեռած հին մենշևիկյան վեճը —մեզ միանգամայն հասկանալի  
յե. Բայց ի՞նչ ե խորհում բայլշեվիկ Ս. Խանոյանը։

— «Պատմական իրողությունը» ուրացել եք, «արժանավոր ըն-  
կերների (իմա՝ մենշևիկների) կատարած գործը չեք նկատել» — բողո-  
քում ե Գ. Դարացյանը։

— «Պատմությունը հեղաթյուրել եք, պատմական փաստերը (?? Մ.)  
զոհել եք վոչ պատմական անձերի (?: Մ.)» — կրկնում ե Ս. Խանոյանը.  
Ցեթե տարրական պատասխանատվության չափ զգար ընկ. Շ.  
Խ. Խանոյանը, նա չպիտի բավականանար «ըսկի վոչ կոմունիստ» մեն-  
շևիկի եին յերգը լսելով, եին բամբասանքը նույնությամբ կրկնելով,  
այլ բայլշեվիկյան անողորությամբ պիտի մերկացներ մեր «հեղա-  
թյուրած փաստերը». Աւղիդ սրա հակառակն ե վարվել նա՝ կրկնելով  
Դարացյանի այդ «ի խորոց սրտի» գանգատը։

Փիտակցելով, ըստ յերեվույթին, «կոմպետենտ» մենշևիկի դիտո-

զությունների ծպոյալ նպատակն ու արժեքը՝ մեր մյուս ուղցնողներ  
ընկ. Ե. Սուրբնը («Մարտակոչ» Ն 32, 1927 թ.) երաժարվել և «առձ  
նապես զբաղվել այս գրի բնագաւուրյամբ»: Մակայն առանձին մէ<sup>1</sup>  
հաճույքով նա յեկա ծամծում և գլխավոր քննադատի անկապ սուտը  
«կերասինի» նազը: Բնկ. Ե. Սուրբնը, կարծեք, վեճ չունի. մեզ հետ  
նա միայն համեստարար եիւցեցում և ժամանակին ժներքված այդ հեր-  
յուրանը՝ լուպայի տակ առնելու «պատմական ուսումնափություն-  
ներ կատարող հեղինակի անփորձությունը»: Ի՞նչ անուն տալ բնա  
կա այս մոսեցման յեվի՞նչ հասարակական արժեքնրա ամպագործու-  
յեղքակացության: — Սուրբնական մեթոդը նոր Ե՝ ուրույն յեվ ունի  
հասուկ արժեք յեվ նշանակություն՝ վորքան ել նա անպատճառ ու  
տգեղ չլինի:

Մեզ մնում և վերջում միայն կրկնել հանճարեղ ֆլորենտիացու  
խոսքը՝

— Segui il tuo corso e lascia dir le genti! (գնա՛ քո ճանապա՛ ո՞ւ  
ի՞նչ ել զոր մարդիկ չասեն):

\* \*

Յերկրորդ հրատարակությունը լույս և տեսնում համեմատական  
չափով լրիվ: Այս չորս տարվա ընթացքում մեզ հետաքրքրող թեմայի  
շուրջ՝ կան աշխատանքներ չեն յեղել, բացի լրազրական մի քանի՛  
հիշողություններից, վորոնը առավելապես պերսոնիֆիկացիայի յեւ  
յենթարկում պատմական անցյալը՝ քան որյեկտիվ խակությունը ներ-  
կայացնում: Մեր հիմնական աղբյուրը այս անգամ յեւս հանդիսացե  
և արխիվային մատերիալը, վոր հավաքել ենք հատկապես Լենինգրած  
սկօն օդելու Կենտրաքիւա-ից: Բոլոր հնարավոր միջոցներով աշխա-  
տել ենք ճշտել պատմական յուրաքանչյուր փաստ:


Լրացրած են նյութերով 7, 8 յեվ 9 ըդ գլուխները: Վերամշակ  
ված և 6-րդ գլուխը: այստեղ աշխատել ենք լրիվ ներկայացնել ս.-դ  
կազմակերպությունների աշխատանքները՝ ծանրանալով նայել մասունք  
վրա: Հարկավ բոլոր այդ լրացումներով մենք միայն ամբողջացրել ենք  
արժարածած մեր հիմնական միտքը:


Ընորհիվ այն հանգամանքի, վոր մի շարք գործադրույներ նախա  
պատրաստված եյին 1906 թ. վերջերին յեվ հայտարարված միայն 1906  
թ. առաջին ամիսներում - մենք անհրաժեշտ գտանք քանի քանի վորակու-  
շարժման նկարագիրը հասցնել մինչեվ 1907 թ. Մայիսի 1-ը Տեխնի-  
կական ներկայացումներով կիրառել ենք նայեվ կարճ վերնագրերի սի-  
տեմը:

Յերկրորդ հրատարակության կցել ենք Ա. Կախոյանի նկարը, Ալեք-  
սանդրապոլի կազմակերպության մեկ թուուցիկի պատճենն (հավելվա-  
ծում) յեվ կատարել ենք խմբագրական մի քանի ուղղումները:

Հունվար, 1928 թ.  
Մոսկվա:

Եեր. Մելիք-Շուշյան





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Զրադ.



220033817

